Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2014)4 հանձնարարականը անդամ երկրներին՝ էլեկտրոնային մոնիթորինգի վերաբերյալ

(Նախարարների կոմիտեի կողմից հաստատվել է 2014թ. փետրվարի 19-ին՝ փոխնախարարների 1192-րդ հանդիպման ժամանակ)

Նախարարների կոմիտեն, առաջնորդվելով Եվրոպայի խորհրդի կանոնադրության թիվ 15.բ հոդվածով,

Նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է՝ հասնել առավել միասնության իր անդամների միջև,

Համաձայնելով, որ անհրաժեշտ է է՛լ ավելի զարգացնել միջազգային համագործակցությունը քրեական պատիժների իրականացման ասպարեզում,

Համարելով, որ նման համագործակցությունը կնպաստի արդարադատության բարելավմանը, պատիժների արդյունավետ իրականացմանը՝ դատապարտյալների մարդկային իրավունքների և արժանապատվության հանդեպ լիարժեք հարգանքի պայմաններում, ինչպես նաև հանցանք կատարելու հավանականության նվազեցմանը,

Համաձայնելով, որ ազատությունից զրկելը պետք է կիրառվի որպես ծայրահեղ միջոց, և որ բոլոր կասկածյալների ու դատապարտյալների նկատմամբ ներգործության միջոցները կարող են արդյունավետ և ավելի քիչ ծախսերով իրականացնել համայնքի ներսում,

Համարելով, որ բանտերում պահվող անձանց թվի շարունակական աճը կարող է հանգեցնել բանտարկության այնպիսի պայմանների, որոնք, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համապատասխան նախադեպերի, չեն համապատասխանում Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (ETS No. 5) 3-րդ հոդվածին,

Եվս մեկ անգամ հիշեցնելով, որ բանտերի գերբեռնվածությունը և բանտերում պահվող անձանց թվի աճը թե՛ մարդու իրավունքների, և թե՛ քրեակատարողական հաստատությունների արդյունավետ կառավարման տեսանկյունից մեծ խոչընդոտ են բանտային վարչակազմերի և, ընդհանուր առմամբ՝ քրեական արդարադատության համակարգի համար,

Ընդունելով, որ քրեական արդարադատության գործընթացի շրջանակներում կիրառվող էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կրճատել ազատությունից զրկելու անհրաժեշտությունը՝ միաժամանակ ապահովելով համայնքի ներսում կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների նկատմամբ հսկողության արդյունավետությունը՝ դրանով իսկ օգնելով կանխել հանցագործությունները,

Միևնույն ժամանակ ընդունելով, որ էլեկտրոնային մոնիթորինգի տեխնոլոգիաները պետք է օգտագործվեն լավ կարգավորված և համաչափություն ապահովող եղանակով՝ էլեկտրոնային մոնիթորինգի ենթակա անձի և համապատասխան երրորդ անձանց անձնական և ընտանեկան

կյանքի վրա դրանց հավանական բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով,

Հետևաբար, համաձայնելով, որ անհրաժեշտ է սահմանել էլեկտրոնային մոնիթորինգի տեխնոլոգիաների կիրառման սահմանափակումների, տեսակների ու եղանակների վերաբերյալ կանոններ՝ անդամ երկրների կառավարություններին այս ոլորտի օրենսդրության, քաղաքականության և պրակտիկայի հարցերում ուղղորդելու նպատակով,

Համաձայնելով նաև, որ անհրաժեշտ է մշակել էթիկական և մասնագիտական ստանդարտներ՝ իշխանության պետական մարմիններին, այդ թվում՝ դատավորներին, դատախազներին, բանտային վարչակազմերին, պրոբացիոն գործակալություններին, ոստիկանությանը և այդ սարքավորումները կիրառող կամ կասկածյալների ու դատապարտյալների նկատմամբ հսկողություն իրականացնող գործակալություններին էլեկտրոնային մոնիթորինգի արդյունավետ կիրառման հարցում ուղղորդելու նպատակով,

Հաշվի առնելով՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (ETS No. 5),
- Պայմանական դատապարտված և պայմանական ազատված դատապարտյալների նկատմամբ հսկողության մասին եվրոպական կոնվենցիան (ETS No. 51),
- Համայնքային պատիժների և այլ միջոցների մասին կանոնների վերաբերյալ թիվ Rec(92)16 հանձնարարականը,
- Պատիժների հետևողականության վերաբերյալ թիվ Rec(92)17 հանձնարարականը,
- Պատիժների և այլ միջոցների իրականացմանն առնչվող անձնակազմի վերաբերյալ թիվ Rec(97)12 հանձնարարականը,
- Բանտերի գերբեռնվածության և բանտերում պահվող անձանց ներհոսքի վերաբերյալ թիվ Rec(99)22 հանձնարարականը,
- Համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացումը կատարելագործելու մասին եվրոպական կանոնների վերաբերյալ թիվ Rec(2000)22 հանձնարարականը,
- Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ թիվ Rec(2003)22 հանձնարարականը,
- Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ թիվ Rec(2006)2 հանձնարարականը,
- Պատիժների կամ այլ միջոցների ենթարկված անչափահաս դատապարտյալների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ թիվ CM/Rec(2008)11 հանձնարարականը,
- Եվրոպական պրոբացիոն կանոնների վերաբերյալ թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականը,
- Բանտային անձնակազմի էթիկայի եվրոպական կանոնագրքի վերաբերյալ թիվ CM/Rec(2012)5 հանձնարարականը.

Նկատի առնելով՝

- Ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Տոկիոյի կանոններ) (բանաձև թիվ 45/110),
- Կին բանտարկյալների հանդեպ վերաբերմունքի և կին դատապարտյալների նկատմամբ կիրառվող՝ ազատությունից զրկելու հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի կանոնները (Բանգկոկյան կանոններ) (բանաձև թիվ 2010/16),
- Անչափահասների գործերով արդարադատության իրականացման ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ) (բանաձև թիվ 40/33),
- Վճիռների և պրոբացիայի նշանակման որոշումների փոխադարձ ճանաչման մասին Եվրոպական միության խորհրդի թիվ 2008/947/JHA շրջանակային որոշումը՝ պրոբացիոն միջոցառումների և այլընտրանքային պատիժների նկատմամբ հսկողության վերաբերյալ,
- Որպես որոշակի ժամկետով ազատազրկման այլընտրանք հսկողական միջոցներ նշանակելու մասին որոշումների՝ Եվրոպական միության անդամ երկրների միջև փոխադարձ ճանաման սկզբունքի վերաբերյալ Եվրոպական միության խորհրդի թիվ 2009/829/JHA շրջանակային որոշումը՝

Անդամ երկրների կառավարություններին առաջարկում է՝

- իրենց համապատասխան օրենսդրությունն ու պրակտիկան վերանայելիս ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ սույն հանձնարարականի հավելվածում սահմանված սկզբունքները կիրառելու համար,
- ապահովել սույն հանձնարարականի և դրա մեկնաբանությունների տարածումը իշխանության համապատասխան մարմինների ու գերատեսչությունների, համապատասխան նախարարությունների, բանտային վարչակազմերի, պրոբացիոն գործակալությունների, ոստիկանության և համապատասխան այլ իրավապահ մարմինների, ինչպես նաև էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումներ կիրառող կամ քրեական արդարադատության համակարգի շրջանակներում էլեկտրոնային մոնիթորինգի ենթակա դատապարտյալների նկատմամբ հսկողություն իրականացնող այլ գործակալությունների շրջանում:

I. Կարգավորման շրջանակը

Սույն հանձնարարականի նպատակն է՝ սահմանել էթիկայի հետ կապված հարցերի և մասնագիտական ստանդարտների վերաբերյալ հիմնարար սկզբունքների ամբողջություն, որը պետական իշխանության մարմիններին հնարավորություն կընձեռի ապահովել քրեական արդարադատության շրջանակներում էլեկտրոնային մոնիթորինգի տարբեր ձևերի արդարացի, համաչափ և արդյունավետ կիրառումը՝ համապատասխան անձանց մարդկային իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանքի պայմաններում:

Հանձնարարականը նաև նպատակ ունի պետական իշխանությունների ուշադրությունը հրավիրելու այն հանգամանքին, որ էլեկտրոնային մոնիթորինգ կիրառելիս ձեռնարկվելիք խնամքի հատուկ միջոցառումները չպետք է թուլացնեն կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների հետ համայնքի ներսում աշխատող իրավասու անձնակազմի կողմից վերջիններիս հետ կառուցողական և մասնագիտական փոխհարաբերությունների ձևավորումը կամ փոխարինեն դրանց: Հարկավոր է ընդգծել, որ տեխնոլոգիական հսկողության նշանակումը կարող է օգտակար հավելում լինել որևէ կասկածյալի, մեղադրյալի և դատապարտյալի հետ տարվող սոցիալական և հոգեբանական դրական աշխատանքներին, որոնք սահմանված են Նախարարների կոմիտեի համապատասխան հանձնարարականներում, մասնավորապես՝ Համայնքային պատիժների և այլ միջոցների մասին կանոնների վերաբերյալ թիվ Rec(92)16 հանձնարարականում, Պատիժների կամ այլ միջոցների իրականացմանն առնչվող անձնակազմի վերաբերյալ թիվ R(97)12 բանաձևում, Եվրոպական բանտային կանոնների մասին թիվ Rec(2006)2 հանձնարարականում, Եվրոպայի խորհրդի պրոբացիոն կանոնների մասին թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականում և Բանտային անձնակազմի էթիկայի եվրոպական կանոնագրքի վերաբերյալ CM/Rec(2012)5 հանձնարարականում:

II. Սահմանումներ

«Էլեկտրոնային մոնիթորինգը» ընդհանուր տերմին է, որը վերաբերում է հսկողության բոլոր ձևերին, որոնցով մոնիթորինգի են ենթարկվում քրեական արդարադատության գործընթացում ներգրավված անձանց գտնվելու վայրը, տեղաշարժը և վարքի որոշակի դրսևորումները: Էլեկտրոնային մոնիթորինգի ներկայիս ձևերը հիմնված են ռադիոալիքային, կենսաչափական կամ արբանյակային հսկողության տեխնոլոգիաների վրա: Դրանք սովորաբար անձին ամրակցված հեռակառավարվող սարքեր են:

Կախված տվյալ իրավական համակարգից, էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կիրառվել հետևյալ եղանակներով.

- քրեական գործով վարույթի մինչդատական փուլում,
- որպես ազատազրկման ձևով նշանակված պատժի կիրառման հետաձգման կամ որպես այդ պատժի իրականացման պայման,

- որպես նշանակված քրեական պատիժը համայնքում իրականացնելու նկատմամբ հսկողության առանձին միջոց,
- պրոբացիոն այլ միջոցառումների հետ համակցությամբ,
- որպես ազատազրկում կրող անձանց ազատման նախապատրաստելու միջոց,
- բանտից պայմանական ազատվելու շրջանակներում,
- որպես բանտից ազատվելուց հետո դատապարտյալների առանձին խմբերի ինտենսիվ ուղղորդման և հսկողության միջոց,
- բանտի ներսում կամ բաց տեսակի բանտերի սահմաններում դատապարտյալների ներքին տեղաշարժի մոնիթորինգի միջոց,
- որպես հանցագործություններից տուժած անձանց որոշակի կասկածյալներից, մեղադրյալներից կամ դատապարտյալներից պաշտպանելու միջոց:

Իրավական որոշ համակարգերում, որտեղ էլեկտրոնային մոնիթորինգը կիրառվում է որպես ազատազրկման ձևով պատժի իրականացման տարբերակ, իշխանության մարմինները էլեկտրոնային մոնիթորինգի ենթակա անձանց համարում են բանտարկյալներ:

Որոշ իրավական համակարգերում էլեկտրոնային մոնիթորինգն ուղղակի ղեկավարվում է բանտերի, պրոբացիոն գործակալությունների, ոստիկանության կամ իրավասու պետական այլ մարմիններից կողմից, մինչդեռ որոշներում այն իրականացվում է մասնավոր ընկերությունների կողմից՝ պետական համապատասխան գերատեսչության հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

Որոշ իրավական համակարգերում սարքը կրող կասկածյալը, մեղադրյալը կամ դատապարտյալը վճարում է այդ սարքի կիրառման հետ կապված ծախսերի մի մասը, մյուսներում էլեկտրոնային մոնիթորինգի հետ կապված ծախսերը հոգում է միայն պետությունը:

Որոշ իրավական համակարգերում էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կիրառվել անչափահաս կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների պարագայում, մինչդեռ մյուսներում այս միջոցն անչափահասների նկատմամբ կիրառելի չէ:

«Կասկածյալը կամ մեղադրյալը[1]» այն անձն է, ով կասկածվում է քրեական հանցագործությունը կատարելու մեջ կամ նրան մեղադրանք է առաջադրվել քրեական հանցագործությունը կատարելու համար, սակայն այդ հանցանքի համար նա չի դատապարտվել:

«Դատապարտյալը» այն անձն է, ով դատապարտվել է քրեական հանցագործություն կատարելու համար:

[1] Անգլերեն բնօրինակում գործածված է միայն “suspect” բառը, որը բառացի թարգմանությամբ նշանակում է կասկածյալ: Հայերենում կիրառվել է «կասկածյալ կամ մեղադրյալ» արտահայտությունը՝ ելնելով հայաստանյան օրենսդրությունում կիրառվող տերմինաբանությանը համահունչ լինելու նկատառումներից (ծանոթագրությունը՝ թարգմանչի):

«Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորում կիրառող գործակալությունը» սովորաբար մասնավոր ընկերությունն է, որն արտադրում, առաջարկում, վաճառում, վարձակալում կամ տնօրինում է այդ սարքավորումը:

«Էլեկտրոնային մոնիթորինգի ենթակա անձանց նկատմամբ հսկողության համար պատասխանատու գործակալությունը» պետական գործակալություն կամ մասնավոր ընկերություն է, որին իշխանության իրավասու մարմինները լիազորել են որոշակի ժամանակահատվածում վերահսկել կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտյալի գտնվելու վայրը, տեղաշարժը կամ վարքի որոշակի դրսևորումները:

«Պրոբացիոն գործակալությունը» այն մարմինն է, որը պատասխանատու է օրենքով նախատեսված և դատապարտյալի նկատմամբ նշանակված համայնքային պատիժների և այլ միջոցների իրականացման համար: Դրա խնդիրները ներառում են մի շարք գործողություններ և միջոցառումներ, որոնցից են՝ վերահսկողությունը, ուղղորդումը և օժանդակությունը՝ դատապարտյալների սոցիալական ներառման, ինչպես նաև՝ հանրային անվտանգությանը նպաստելու նպատակով: Կախված երկրի իրավական համակարգի տեսակից՝ այն կարող է իրականացնել հետևյալ գործառույթներից մեկը կամ մի քանիսը. դատական կամ որոշում կայացնող այլ մարմիններին տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն՝ հիմնավոր և արդարացի որոշումներ կայացնելու նպատակով. ազատազրկման ընթացքում ուղղորդել և աջակցել դատապարտյալներին՝ նրանց ազատմանը և հասարակությունում իրենց վերագտնելուն նախապատրաստելու նպատակով. մոնիթորինգի ենթարկել և օժանդակել վաղաժամկետ ազատված անձանց, իրականացնել վերականգնողական արդարադատության հետ կապված միջոցառումներ և օժանդակություն առաջարկել հանցագործությունից տուժած անձանց:

Կախված իրավական համակարգի տեսակից՝ պրոբացիոն գործակալությունը կարող է լինել նաև «Էլեկտրոնային մոնիթորինգի ենթակա անձանց վերահսկողության համար պատասխանատու» գերատեսչությունը:

III. Հիմնական սկզբունքներ

1. Քրեական արդարադատության շրջանակներում էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման դեպքերը, տեսակները, տևողությունը և եղանակները պետք է կարգավորվեն օրենքով:

2. Էլեկտրոնային մոնիթորինգ նշանակելու կամ նշանակումը չեղյալ համարելու որոշումները պետք է կայացվեն դատական մարմինների կողմից կամ պետք է ենթակա լինեն դատական կարգով բողոքարկման:

3. Էլեկտրոնային մոնիթորինգը մինչդատական վարույթում կիրառելու դեպքում հարկավոր է հատուկ ուշադրություն դարձնել, որպեսզի այն կիրառվի միայն իրական անհրաժեշտության դեպքում:

4. Էլեկտրոնային մոնիթորինգի տեսակը և կիրառման եղանակը տևողության և միջամտության աստիճանի առումով պետք է համաչափ լինեն ենթադրյալ կամ կատարված հանցանքի

ծանրությանը, դրանք ընտրելիս կամ կիրառելիս պետք է հաշվի առնվեն կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտյալի անձնական հանգամանքները և դրանք պետք է պարբերաբար վերանայվեն:

5. Էլեկտրոնային մոնիթորինգը չպետք է կիրառվի այնպիսի եղանակով, որը կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտյալի իրավունքները կսահմանափակի ավելի, քան սահմանված է այն նշանակելու որոշմամբ:

6. Էլեկտրոնային մոնիթորինգ նշանակելիս և դրա տեսակը, տևողությունը և կիրառման եղանակներն ընտրելիս պետք է հաշվի առնվեն դրանց ազդեցությունը կասկածյալներին, մեղադրյալներին կամ դատապարտյալներին սերտորեն առնչվող ընտանիքների և երրորդ անձանց իրավունքների ու շահերի վրա:

7. Էլեկտրոնային մոնիթորինգ նշանակելիս կամ իրականացնելիս պետք է բացառվի խտրականությունը՝ սեռի, ռասայի, մաշկի գույնի, ազգային պատկանելության, լեզվի, կրոնի, սեռական կողմնորոշման, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ազգային փոքրամասնությանը պատկանելու կամ ֆիզիկական կամ հոգեկան դրության հողի վրա:

8. Էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կիրառվել որպես առանձին միջոց՝ կիրառման որոշակի ժամանակահատվածում վերահսկողություն ապահովելու և հանցավորությունը նվազեցնելու նպատակով: Հանցավորությունից զերծ պահելու տևականությունն ապահովելու համար այն պետք է զուգակցվի մասնագիտական այլ միջամտություններով և օժանդակ միջոցներով, որոնց նպատակը դատապարտյալների սոցիալական վերաինտեգրումն է:

9. Այն դեպքերում, երբ էլեկտրոնային մոնիթորինգ նշանակելու որոշումների իրականացմանը ներգրավված են մասնավոր հատվածի կազմակերպություններ, մոնիթորինգի ենթակա անձանց հանդեպ արդյունավետ, միջազգային էթիկական և մասնագիտական ստանդարտներին համապատասխան ներգործության համար պատասխանատվությունը կրում են իշխանության պետական մարմինները:

10. Պետական իշխանության մարմինները պետք է ապահովեն էլեկտրոնային մոնիթորինգի իրականացմանը մասնավոր հատվածի ներգրավվածության վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը և պետք է կարգավորեն հանրության համար այդ տեղեկատվության մատչելիությունը:

11. Այն դեպքերում, երբ կասկածյալները, մեղադրյալները և դատապարտյալները մասամբ վճարում են էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման ծախսերը, նրանց կողմից վճարվելիք գումարը պետք է համապատասխանի նրանց ֆինանսական դրությանը և պետք է կանոնակարգվի օրենքով:

12. Էլեկտրոնային մոնիթորինգի նշանակման և իրականացման կապակցությամբ համապատասխան գործակալությունների կողմից հավաքված տվյալների տնօրինումը, առկայությունը և կիրառումը պետք է հատկապես կարգավորված լինեն օրենքով:

13. Էլեկտրոնային մոնիթորինգի հետ կապված որոշումների իրականացման համար պատասխանատու անձնակազմը պետք է թվի առումով բավարար լինի և պատշաճ կերպով և պարբերաբար ուսուցանվի իր պարտականություններն արդյունավետ, պրոֆեսիոնալ և էթիկայի ամենաբարձր ստանդարտներին համապատասխան ձևով իրականացնելու հետ կապված հարցերում: Ուսուցումը պետք է ներառի տվյալների պաշտպանության հետ կապված հարցերը:

14. Պետք է ներպետական օրենքով սահմանված կարգով պարբերաբար անցկացվեն էլեկտրոնային մոնիթորինգ իրականացնող գործակալությունների պետական տեսչական ստուգումներ և ապահովվի դրանց անկախ մոնիթորինգի հնարավորությունը:

IV. Քրեական վարույթի տարբեր փուլերում էլեկտրոնային մոնիթորինգի իրականացման պայմանները

15. Միջազգային իրավունքին համապատասխան կարող են իրականացվել տարբեր միջոցառումներ: Մասնավորապես, կարող է պահանջվել կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտյալի համաձայնությունը կամ կարող են սահմանվել տույժի կանխարգելիչ միջոցներ:

16. Մինչդատական վարույթի ընթացքում էլեկտրոնային մոնիթորինգի իրականացման եղանակները և միջամտության աստիճանը պետք է համաչափ լինեն ենթադրվող հանցագործությանը և հիմնված լինեն արդարադատությունից խուսափող, արդարադատության գործընթացին միջամտող, հասարակական կարգի լուրջ խախտման կամ նոր հանցանք կատարելու վտանգ ներկայացնող անձի հետ կապված ռիսկերի պատշաճ գնահատման վրա:

17. Ներպետական օրենքով պետք է կարգավորվեն մինչդատական վարույթի ընթացքում էլեկտրոնային մոնիթորինգի ներքո գտնվելու ժամանակահատվածը դատարանի կողմից սահմանվող վերջնական պատժի կամ այլ միջոցի ընդհանուր տևողության մեջ հաշվարկելու ձևերը:

18. Այն դեպքերում, երբ գործում է կասկածյալների, մեղադրյալների կամ դատապարտյալների տեղաշարժը էլեկտրոնային մոնիթորինգի կիրառմամբ վերահսկելու միջոցով տուժողների պաշտպանության համակարգ, կարևոր է ունենալ տուժողի նախնական համաձայնությունը, և պետք է արվի ամեն ինչ, որպեսզի տուժողը գիտակցի տվյալ տեխնոլոգիայի հնարավորություններն ու սահմանափակումները:

19. Այն դեպքերում, երբ էլեկտրոնային մոնիթորինգը ենթադրում է որոշակի տարածքներ մուտք գործելու արգելք կամ սահմանափակում, պետք է ջանքեր գործադրել, որպեսզի արգելքի պայմանները չլինեն չափազանց սահմանափակող և չխանգարեն առօրյան համայնքի ներսում ողջամիտ տևողությամբ անցկացնելուն:

20. Այն դեպքերում, երբ պետք է վերահսկել թմրանյութերի կիրառումը, հսկողության տեսակն ընտրելիս պետք է պատշաճ ուշադրություն դարձնել հսկողության էլեկտրոնային և ավանդական մոտեցումների միջամտության աստիճանին և թերապևտիկ ու կրթական ազդեցությանը:

21. Պետք է հնարավորինս խուսափել էլեկտրոնային մոնիթորինգի այն եղանակից, որի պայմաններում ենթադրվում է, որ դատապարտյալը չպետք է լքի բնակության վայրը՝ միայնակ ապրող մարդկանց պարագայում մեկուսացման բացասական ազդեցությունից խուսափելու և միևնույն վայրում բնակվող երրորդ անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով:

22. Կախված հանցագործության բնույթից և դատապարտյալի ղեկավարման ծրագրի տեսակից՝ էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կիրառվել դատապարտյալներին ազատման նախապատրաստելու նկատառումներով՝ դատապարտյալներին կարճաժամկետ մեկնումների թույլտվությունների թիվն ավելացնելու, բանտից դուրս աշխատելու կամ բաց տեսակի բանտում գտնվելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

23. Էլեկտրոնային մոնիթորինգը կարող է կիրառվել որպես ազատազրկման իրականացման այլընտրանք, և նման դեպքերում դրա տևողությունը պետք է սահմանվի օրենքով:

24. Էլեկտրոնային մոնիթորինգը անհրաժեշտության դեպքում կարող է կիրառվել բանտից վաղաժամկետ ազատելու դեպքում: Նման դեպքում պետք է պահպանվի դրա տևողության համամասնությունը պատժի չկրած մասին:

25. Էլեկտրոնային մոնիթորինգը անհրաժեշտության դեպքում կիրառվում է ազատազրկման ձևով պատիժը կրելուց հետո՝ որպես ազատումից հետո կիրառվող միջոց, որի տևողությունը և միջամտության աստիճանը պետք է հստակ սահմանված լինի՝ հաշվի առնելով նախկին բանտարկյալների, նրանց ընտանիքների և երրորդ կողմերի վրա դրա ընդհանուր ազդեցությունը:

V. Էթիկայի հետ կապված հարցեր

26. Էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման նպատակահարմարությունը կամ դրա եղանակները որոշելիս պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր կասկածյալի, մեղադրյալի կամ դատապարտյալի տարիքը, հաշմանդամության առկայությունը և համապատասխան այլ առանձնահատկությունները:

27. Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումը որևէ դեպքում չի կարող կիրառվել կասկածյալին, մեղադրյալին կամ դատապարտյալին դիտավորությամբ ֆիզիկական կամ հոգեկան վնաս կամ տառապանք պատճառելու նպատակով:

28. Էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման կանոնները պետք է պարբերաբար վերանայվեն՝ այդ ոլորտում տեղի ունեցող տեխնոլոգիական զարգացումները հաշվի առնելու նպատակով, որպեսզի այն հնարավորինս զերծ լինի կասկածյալների, մեղադրյալների, դատապարտյալների և այլ անձանց անձնական և ընտանեկան կյանքին անհարկի միջամտությունից:

VI. Տվյալների պաշտպանություն

29. Էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման ընթացքում հավաքված տվյալները պետք է ենթարկվեն հատուկ կարգավորման՝ տվյալների պահպանման, կիրառման և տնօրինման վերաբերյալ համապատասաան միջազգային ստանդարտներին համապատասխան:

30. Առանձնակի ուշադրություն պետք է դարձվի քրեական գործի քննության ժամանակ և ընթացակարգերում նման տվյալների կիրառման և տնօրինման խստիվ կանոնակարգմանը:

31. Նման տվյալների հետ անփույթ վարվելու կամ դրանք դիտավորությամբ ոչ նպատակային կիրառելու կամ տնօրինելու համար պետք է սահմանվեն պատասխանատվության արդյունավետ միջոցներ:

32. Էլեկտրոնային մոնիթորինգի սարքավորումներ կիրառող կամ էլեկտրոնային մոնիթորինգի ներքո գտնվող անձանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող մասնավոր գործակալությունները, իրենց տրամադրության տակ գտնվող տվյալների տնօրինման ընթացքում պետք է առաջնորդվեն նույն կանոններով ու կարգավորումներով:

VII. Անձնակազմը

33. Համայնքային պատիժների և այլ միջոցների մասին կանոնների վերաբերյալ թիվ Rec(92)16 հանձնարարականի, Պատիժների և այլ միջոցների իրականացմանն առնչվող անձնակազմի վերաբերյալ թիվ Rec(97)12 հանձնարարականի, Եվրոպական պրոբացիոն կանոնների վերաբերյալ թիվ CM/Rec(2010)1 հանձնարարականի և Բանտային անձնակազմի էթիկայի եվրոպական կանոնագրքի վերաբերյալ թիվ CM/Rec(2012)5 հանձնարարականի բոլոր այն կանոնները, որոնք վերաբերում են անձնակազմին՝ ենթակա են կիրառման:

34. Անձնակազմը պետք է ուսուցում անցնի կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների հետ սրտացավ հաղորդակցման, տեխնոլոգիայի կիրառման, նրանց անձնական և ընտանեկան կյանքի վրա այդ տեխնոլոգիայի ազդեցության և դրա հետ սխալ վարվելու հետևանքների վերաբերյալ կասկածյալներին, մեղադրյալներին և դատապարտյալներին հասկանալի եղանակով և լեզվով տեղեկացնելու վերաբերյալ:

35. Այն դեպքերում, երբ էլեկտրոնային մոնիթորինգը կիրառվում է տուժողների աջակցության կառուցակարգերի շրջանակներում, անձնակազմը պետք է ուսուցանվի տուժողների հետ աշխատանքի վերաբերյալ:

36. Էլեկտրոնային մոնիթորինգի համակարգեր ձևավորելիս հարկավոր է ուշադրություն դարձնել մոնիթորինգային կենտրոնի կողմից հավաքված տվյալների կարևորության թե՛ մարդկային, և թե՛ ավտոմատացված գնահատականները՝ հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի առավելությունները:

37. Էլեկտրոնային մոնիթորինգի նշանակման կամ իրականացման իրավասություններով օժտված անձնակազմը պետք է պարբերաբար թարմ տեղեկատվություն ստանա և ուսուցանվի տվյալ անձանց նկատմամբ սարքավորումների տնօրինման, կիրառման և դրանց ազդեցության հետ կապված հարցերով:

38. Անձնակազմը պետք է ուսուցանվի տեխնոլոգիայի տեղադրման, անջատման և տեխնիկական սպասարկման գործին՝ սարքավորման արդյունավետ և հստակ աշխատանքն ապահովելու նպատակով:

VIII. Աշխատանք հանրության հետ, հետազոտություններ և գնահատում

39. Ընդհանուր հանրությունը պետք է տեղեկացվի էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման էթիկական և տեխնոլոգիական ասպեկտների, դրա արդյունավետության, նպատակի, ինչպես նաև դրա՝ իբրև կասկածյալների, մեղադրյալների և դատապարտյալների ազատությունը սահմանափակող միջոցի արժեքավորության վերաբերյալ: Իրազեկությունը պետք է բարձրացվի նաև այն փաստի մասին, որ էլեկտրոնային մոնիթորինգը չի կարող փոխարինել պրոֆեսիոնալ մարդկային միջամտությանը և կասկածյալներին, մեղադրյալներին և դատապարտյալներին ցուցաբերվող աջակցությունը:

40. Հարկավոր է իրականացնել հետազոտություններ, անկախ գնահատումներ ու մոնիթորինգ՝ քրեական ընթացակարգերում էլեկտրոնային մոնիթորինգի կիրառման էթիկական և մասնագիտական հարցերի շուրջ իրազեկ որոշումներ կայացնելու հարցում պետական իշխանության մարմիններին օգնելու նպատակով: